

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/5

19 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Էլտեխմիր» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 14.04.2015 թ-ի թիվ 5010245 ակտի դեմ:

«Էլտեխմիր» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարի 7 հուլիսի թիվ 5010245 հանձնարարագրի համաձայն կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 14.04.2015թ. կազմված թիվ 5010245 ակտը կազմվել է օրենքի կոպիտ խախտումներով: Մասնավորապես, 1-ին կետի ա) ենթակետով արձանագրվել է, որ ընկերության կողմից խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2 կետի է) ենթակետի պահանջները: Ըստ որի, համախառն եկամտից կատարված նվազեցումները ավել է արտացոլվել ֆինանսական գործունեության հետ կապված 5228000 դրամ ծախսերի /վարկի տոկոսների/ չափով:

Հարկ է նշել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի է) ենթակետի համաձայն ծախսերի թվին են դասվում վարկերի և փոխառությունների տոկոսները: Միաժամանակ հասկանալի չէ, թե ինչ ապացույցների հիման վրա է հիմնված ակտը կազմող հարկային ծառայողների այն պնդումը, որ ծախսերն ավել են հաշվարկվել 5228000 դրամի չափով, քանի որ ընկերությունում առկա են նույն հոդվածով սահմանված (վարկի տոկոս) հիմնավորող փաստաթղթերը: Ուստի ակտում բացակայում են այն հիմքերը, որոնք կփաստեն ծախսերը ավել ցույց տալու հանգամանքը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) ենթակետով սահմանված սահմանափակումը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ տոկոսները հաշվարկվել են բանկից տրված վարկի դիմաց:

Ելնելով վերոգրյալից՝ «Էլտեխմիր» ՍՊԸ-ն խնդրում է վերանայել Նոր Նորքի ՀՏ 14.04.2015 թ-ի թիվ 5010245 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 07.07.2014 թ-ի թիվ 5010245 հանձնարարագրի համաձայն «Էլտեխմիր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 14.04.2015 թ-ի

թիվ 5010245 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.011.785 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգմանը ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերով ձևակերպված նվազեցումների և 2011 թ-ի տարեկան արդյունքներով ՀՏ ներկայացված շահութահարկի հաշվարկում արտացոլված համախառն եկամուտից կատարված նվազեցումների համադրումից պարզվեց, որ ներկայացված հաշվարկում ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը (վարկի տոկոսները) ավել են արտացոլվել (փաստաթղթերով չեն հիմնավորվել) 5.228.000 դրամի չափով: Խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի և նույն հոդվածի 2-րդ կետի է) ենթակետի պահանջները: Նշված խախտման արդյունքում հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 5.228.000 դրամի չափով: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն որոշվել է պակաս հաշվարկված շահութահարկը, որը կազմել է 1.045.600 դրամ:

Արդյունքում հիմք ըղնունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները՝ շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.011.785 դրամ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ շահութահարկի գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում չեն ներկայացվել ընկերության կողմից 2011 թ-ի տարեկան արդյունքներով հարկային տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկում արտացոլված ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (վարկի տոկոսների) կատարման համար հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերը:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ մի շարք օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված ստուգման ընթացքում հնարավորություն չի ընձեռնվել ներկայացնել 2011 թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկում արտացոլված բանկից ստացված վարկի տոկոսները հիմնավորող փաստաթղթերը: Նշվեց նաև, որ ընկերությունը դիմել է վարկային միջոցները տրամադրած «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին Ակտի 1-ին կետում հիշատակված՝ 2011 թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկում արտացոլված վարկի տոկոսները հիմնավորող փաստաթղթերի օրինակները ստանալու համար: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Բանկ) կողմից ընկերությանն են տրամադրվել պահանջված փաստաթղթերի օրինակները, որոնք և ներկայացվեցին Հանձնաժողովին: Այսպես, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Էլտեխմիր» ՍՊԸ-ի միջև 18.02.2011 թ-ին կնքվել է վարկ տրամադրելու մասին թիվ VP 005329 լրացուցիչ համաձայնագիրը. որի համաձայն Բանկը պարտավորվել է ընկերությանը տրամադրել վարկ 360.000.000 ՀՀ դրամ գումարի չափով, տարեկան 13 տոկոսով:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Էլտեխմիր» ՍՊԸ-ի միջև 30.04.2011 թ-ին կնքվել է վարկ տրամադրելու մասին թիվ VP 005923 լրացուցիչ համաձայնագիրը, որի համաձայն Բանկը պարտավորվել է ընկերությանը տրամադրել վարկ 54.000 ԱՄՆ դոլար գումարի չափով, տարեկան 11 տոկոսով:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Էլտեխմիր» ՍՊԸ-ի միջև 28.12.2011 թ-ին կնքվել է վարկ տրամադրելու մասին թիվ VP 009052 լրացուցիչ համաձայնագիրը, որի համաձայն Բանկը պարտավորվել է ընկերությանը տրամադրել վարկ 200.000 ԱՄՆ դոլար գումարի չափով, տարեկան 11 տոկոսով:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Էլտեխմիր» ՍՊԸ-ի միջև կնքված վերոգրյալ վարկ տրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագրերն արձանագրեց, որ Ակտի 1-ին կետում արձանագրված խախտումը հիմնավոր չէ և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից: Մասնավորապես, ընկերության կողմից ներկայացված ապացույցները հիմնավորում են, որ ընկերության կողմից 2011 թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկում արտացոլված ծախսերը՝ բանկից ստացված վարկի տոկոսները, փաստաթղթերով հիմնավորված են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի ու 5-րդ մասի դրույթներով՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 14.04.2015 թ-ի թիվ 5010245 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝


**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**